

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Մոսկուա, 25ին Հոկտ. 1867.

Խմ ազնիւ թարեկամ

Գրիգոր Յարութիւնեան (1)

Սիրելի նամակդ ամսուս 14ից արձակուած, անկորուսս հասաւ ինձն
Ես գուշակում էի արդէն, որ Ձեզ պիտի մի հիւանդութիւն պատահած լիւ
նէր, որոյ պատճառաւ այսքան երկար մնաց աչքի Ձեր պատասխանուն ծա-
ւելի եղաւ ինձ լսել Ձեր նամակից, որ աչացաւութիւն ունիք Հարկաւոր է
Ձեզ օրինաւոր բժշկի հետ խորհրդակցել, զգուշութեամբ դործ դնել մի
իմաստուն եւ բանագէտ բժշկի պատուերներ. լաւ է լիներ Ձեզ մի քանի
ժամանակ ժուժկալել մսակերութիւնից, գինու զործադրութիւնից, հե-
ռացնել ձեզանից ամենայն բորբոքիչ եւ ջեռու ցիշ կերակուր կամ ըմպելի.
ջուր կամ լիմոնադ խմել շատ. աղօտալոյս սենեկի մէջ նստել, որովհե-
տեւ սաստիկ լուսափայլութիւնը նոյնպէս գրգսեցուցիչ է աչքի ջիղերին.
ամենեւին հեռի պահել ծուխ սասած բան, որ լինում է թամբաքու (պա-
պիրոս) քաշելուց, կաթն եւ սպիտակ հաց իրան կերակուր, կակզու-
թիւն, այո՛ եւ լուծումն իսկ որովայնի (մի քանի օր) վատ չէր լինելու :
Դուք չեք գրում ինձ, թէ ի՞նչ առիթներով յառաջացած է Ձեր աչացա-
ւութիւնը : Հարկաւոր չէ Ձեզ նստել պատուհանին դէպուղիղ յանդիման,
այլ այնպէս, որ լոյսը կողմնակի ընկնի Ձեր աչքի վերայ. լաւ է նոյն-
պէս հոգալ, որ աչքի առարկան լինեին կանաչ մարմիններ, կանաչ դաշտ,
կանաչ թուղթ, կանաչ վարուգոյր պատուհանների վերայ : Աչք սասած
բանը շատ աղնիւ մի գործարան կամ անդամ է, եւ կարօս միծ զգուշու-
թեամբ գարմանատարութեան եւ պահպանութեան Աշացաւութիւնը կամ
առ հասարակ տկարութիւնը աչքի յառաջանում է զանազան պատճառնե-
րից. զոր օրինակ չսափազանց կնասսիրութիւնից եւ մարմնոյ ազնիւ հիւ-
թերի վատնողութիւնից, ծխից, անողիսան հոտերից. բայց ես կարծեմ,
ու բուք այսպիսի բաներից միշտ հետի էք եղած :

Խմ անդափոխութիւնս զէպ ի Թիֆլիս գալոց ամառան մէջ, եթէ
Աստուած յաջողէ, ես որոշել եմ, Առանց իմ ներկայութեանս այդ տեղ,

(1) Դեռ կենդանի է : Երկար տարիներից ի վեր դեռ շարունակում
է վերակացուի եւ ուսու ցչական պաշտօններ վարել Թիֆլիսի ներսիսեան
դպրոցում :

ոչինչ բայն կարելի չէ կարդաղրել . եւ մեք չունիմք եւս իրաւունք յառաջուց հաւատ պահանջել մարդերից . ամենայն ծառ ի պաղոյ իւրմէ ճանաչի . արդիւնք ցոյց տալուց յետոյ կը պահանջենք եւ հատուցումն ։ Այս խնդիրը վճռած է : Թո՛ղ հանգստանան ամենեցուն նողիքը եւ սիրտերը :

Կաթողիկոսը իւր երկու եպիսկոպոսներով , Պետրոս եւ Խորեն անուն , 19ին անցեալ Սեպտ . հաստա Մոսկով : Հասարակութիւնը Մոսկովյաստինակ Հայերիս մեծ պատուղի ընդունեց նորան նոյն իսկ երկաթուղու իջեւ անու մ 12 ժամին գիշերի . 20ին եկու եկեղեցի , եկեղեցւոյ գաւթի զարգատից , ծիրանի թաւշից շինած փոռուս որ ամպ հովանի նորա գլխի վերայ տանելով , եւ չարքով կանդնած կազարեանց ուսումնարանի աշակերտքը ծաղիկներ ցանելով նորա առաջեւ , մոտու եկեղեցին . շարականաների երգեցողութիւնից յետոյ Կաթողիկոսը գալարեցաւ սեղանի առաջեւ երեսը գէպի ի ժողովրդի խուռան բազմութիւնը . որոյ մէջ ներկայ էի եւ ես . շատ ճնշուելով եւ նեղի մէջ : Ասուեցան մի քանի ճառեր ուսանողների եւ այլ մարդու բերանով . յետոյ ինքն Կաթողիկոսը ասաց զէպի ժողովուրդը մի քանի գեղեցիկ իսօսքեր , օրհնեց բազմութիւնը եւ սորանով աւարտուեցաւ առաջին հրավարակալուն հանդէսը : Ժողովուրդը եկեղեցուց յետոյ դիմոց Կաթողիկոսի մօտ , որ իջեւանած էր հարստական Յօնանեանի տանը , եւ չնորհսուրեց վեհափառ տիրոջ դուլուսար : Եւ ես դաշնուեցայ այդ տեղ , մի փոքր յետոյ . երբ ժողովրդի բազմութիւնը անօրացած էր : 21ին եկաւ Կաթողիկոսը ացցելութիւն կազարեանց ինստիտուտին . դիրեքտորքը , ողոփեսարքը , եւ վարժապետները հաւաքուած միասին , պատուղի ընդունեցինք նորան ինստիտուտի փառաւոր դահլձի մէջ : Առաջին ծառ ասողը . իրրեւ ողոփեսար Հայոց , պարսից եւ արաբական լեզուի , եղայ ես . ճառը գրոց լեզուով էր , որ ահա ուղարկուամ եմ Ձեզ : Երկրորդ ճառը ասաց Մսերը , երրորդը մի աշակերտ : Ճառս աւարտելով եւ մատուցանելով վեհափառ Տիրոջը , ասաց նա « շատ լաւ է » : Հանդէսը աւարտուեցաւ պահապանիչ տաելով եւ դուրս գալով դահլձեց եւ : բջելով ինստիտուտի բոլոր յարկերի , ննջարանների , հիւանդանուոցի եւ դասաւունների մէջ : 24ին մեր Հայկական հասարակութիւնը փառաւոր հացկերութիւն տուեց Կաթողիկոսին նոյն ինստիտուտի մեծ դահլձի մէջ և ժամանեցի երեսկոյի . մէր արքայավույիլ ճրագազարդ , մեծախորտիկ , հոյակապ հացկերութիւն էր այս . բազմութիւնը մինչեւ 50 հոգի . հոււասար հաստուցմամբ ամեն մինի կողմից 25 մանէթ : Հրաւիրման պատրամաւորքը հաստրակութեան անունով . էի ես եւ մի այլ անձն Մելքոն Փանեանց արուիսեցի : Կաթողիկոսի կենաց բաժակը իսմելու րոպէին առուեցան ճառեր , առաջին ճառասացը իրրեւ պատղամաւոր հասարակութեան , եղայ նոյնտէս ես : Եւ այս ճառը ուղարկուամ եմ Ձեզ , որ աշխարհարաւա է : բայց աւելի ճոխ եւ հարուստ մաքերով քան թէ

առաջինը գրոց լեզուով, եւ սասաթիկ ոճով։ Կարդա՛ ի՞նքոք եւ մեր բարեւ կամիների հետ միասին, այսուհետեւ կը հասկանաք Դուք Դու ի՞նչպէս է մտածում նազարեանցը եւ ի՞նչպէս դիտէ խօսել իւր աղջի գլխի հետ հրապարակով։ Մեր աղջը վաղուց կը ճանաչէր ինձ, եթէ կամենար բայց մի՞թէ կայ մի հայկական աղջ, որ նախ եւ յառաջ ճանաչէր իւր պատիւը եւ ապա նազարեանցի արժանաւորութիւնը, որ այսքան որոշում է, թնդում է, դղրդում է օդը — ափսո՞ս — մի հայկական անկեանք, չոր ու ցամաք անապատի մէջ։ Եւ յօդուա որո՞յ ո՞հ, մի աղջի եւ հասարակութեան համար, որպիսի մերն է։ Բայց թո՞ղ չխռովուի մեր հոգին։ մեռածներից բան պահանջել կարելի չէ։ նաև եւ յառաջ պիտոյ է այդ մեռածների յարութիւնը բարոյապէս եւ մտաւորապէս, հրաշագործել Քրիստոսի ճշմարտութեամբ եւ աւետարանի լուսով։

Կաթողիկոսի հետ շատ բարեկամադայ, եւ շատ խօսք ու զրոյց մեր մէջ եղաւ աղջային խնդիրների վերայ։ Յոյժ դանդատաւոր է նա բոլոր հոգեւոր կտավալարութեան մէջ անկարգութիւնների վերայ։ մեծապէս անած է ներսիսեան ուսումնարանի ամեննեւին անհոգ եւ բարձի թողի արած կացութեան վերայ, աեղական սուաջնորդի կողմից, ի հարկէ, ի՞նչ պիտի լինի մի տան կառավարութիւն, որ թողած է աղէտ, յիմար եւ անսիրա հոգաբարձուների կամքի։ Բայց թէ Կաթողիկոսը ունի՞ո որ եւ իցէ հաստատ կամք նորոգելու եւ բարեկարգելու այդ ուսումնարանը — ոչինչ վճռական բան չիմացայ։ Ես իմ կարծիքո եւ ցանկութիւնքո յայտնեցի նորան, եւ նա խոստացաւ ինձ թիֆիկզից զրել իւր առաջարկելիքը։ Այսքան և Ամսուս Ձին Կաթողիկոսը զնաց Ս. Պետերբուրգ արդէն յանդիման է եղած կայսրին (Ակին), խօսել է նորա հետ եւ հրաւիրուած էր հացկերութեան հարուանիքի հանդիսին, որ կար Կոնստանտին արքայազնի դսակեր յունաց թագաւորի։ Գէորգի հետ ամուսնութեան պատճառով։ Արգեօք Կաթողիկոսը վերադասնալու է Մոսկուայի վերայով, թէ եւրոպայի միջով, Վարչաւի եւ Վիննայի վերայով, ոչ ոք չգիտէ սոսուդապէս։ Ինձ ցանկալի կը լինէր, որ նա վերադասնար Մոսկուայի վերայով և Խորեն Եսլիուկոսի հետ շատ բարեկամացայ։ ազնի՛ւ մարդ է։ մեր աեսանելը եւ սիրելը զմիմեանս, մին եղաւ։ Եւ ես ուրախ հմ։ որ պատեհ ունեցայ իմ բարեացակամութիւնս առ նա մի մեծ խնդրի մէջ հանդէս հանել։ Եւ իմ թելագրութեամբ այց բանին մասնակից էր բոլոր հայկական հասարակութիւնը Մոսկուայի եւ Պետերբուրգի։ միայն թէ կաթողիկոսը մերժեց մեր խնդրիը յօդուա Խորենի։

Խնդրեմ ինձմէ շատ սիրով ողջունել իմ ազնիւ բարեկամքը, մասնաւնգ պայծառափայլ պարոն Միքայէլ Բեհրուդեանը եւ արժանապատիւ Տէր Մովսէս քահանան Սայաթնեանց։